ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԷՔՍՊՈ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

10.03.2026 17:41

Հարգելի՛ գործընկերներ,

ՀՀ փաստաբանների պալատը նախատեսում է 2026 թվականի ապրիլի 25-26-ին անցկացնել փաստաբանական գրասենյակների Էքսպո-ցուցահանդես՝ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության շենքում (ք. Երևան, Բաղրամյան պող., 24):

Էքսպո-ցուցահանդեսի մասնակից փաստաբանական գրասենյակներին հնարավորություն կտրվի համաֆինանսավորմամբ ներկայանալ առանձին տաղավարով՝ ներկայացնելով իրենց և մատուցվող ծառայությունների շրջանակը: Մասնակից յուրաքանչյուր գրասենյակ ազատ է իր տաղավարի ձևավորման և ներկայացման մեջ:

Միջոցառման շրջանակներում կազմակերպվելու են աշխատաժողովներ, քննարկումներ, սեմինարներ միջազգային գործընկերների մասնակցությամբ:

Էքսպո-ցուցահանդեսին կարող են մասնակցել փաստաբանական գրասենյակները, որոնք ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 25.09.2019թ. թիվ 383-Լ որոշմամբ հաստատված կարգի պահանջների համաձայն հաշվառված են Պալատի պաշտոնական կայքէջում (advocates.am) և ունեն փաստաբանի կարգավիճակ ունեցող երեք և ավել աշխատակից: Մասնակից գրասենյակների հնարավոր քանակը՝ տեխնիկական հնարավորությունների հաշվառմամբ, սահմանափակ է: Հետևաբար նախապատվությունը տրվելու է ավելի վաղ դիմած փաստաբանական գրասենյակներին: Մասնակից փաստաբանական գրասենյակների միջև տաղավարների բաշխումը կատարվելու է վիճակահանությամբ:
Միջոցառման վերաբերյալ Պալատն իրականացնելու է տեղեկատվական արշավ հանրության հնարավորինս լայն շրջանակներում իրազեկում ապահովելու համար: Այդուհանդերձ, միջոցառման վերաբերյալ հետաքրքրությունն ավելացնելու նպատակով նախատեսվում է, որ Պալատի հետ համատեղ կամ առանձին, փաստաբանական գրասենյակները կիրականացեն ակցիաներ:

Հաշվի առնելով նախանշվող ծավալը՝ նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու համար, Փաստաբանական գրասենյակների էքսպո-ցուցահանդեսին մասնակցելու ցանկություն ունենալու դեպքում խնդրում ենք մինչև 2026թ. մարտի 17-ը ներառյալ

հայտագրվել հետադարձ հաղորդագրությամբ: Մանրամասների համար կարող եք կապ հաստատել ՀՀ փաստաբանների պալատի ֆինանսական տնօրեն Անդրանիկ Մարգարյանի հետ (հեռ. +374 43 888 588) :

Ցուցահանդեսին մասնակցելու համար փաստաբանական գրասենյակը պետք է ներկայացնի ստորագրված դիմում՝ կցելով փաստաբան հիմնադիրների (մասնակիցների) վերաբերյալ ապացույց (ՍՊ-ների դեպքում՝ կանոնադրության պատճենը, բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ ռեեստրի քաղվածքը), փաստաբան աշխատակիցների վերաբերյալ ապացույց:

Էքսպո-ցուցահանդեսի հիմնական նպատակները՝

· Փաստաբանական գրասենյակների վերաբերյալ տեղեկատվության տարածում և հաճախորդների ներգրավում,
· Փաստաբանական գրասենյակների մշակույթի ձևավորում,
· Փաստաբանական ծառայությունների պահանջարկի բարձրացում,
· Կորպորատիվ համագործակցության խթանում և հաճախորդների ներգրավում,
· Համագործակցության խթանում հանրություն-փաստաբան, հանրություն-փաստաբանական գրասենյակ, փաստաբան-փաստաբան, փաստաբան-փաստաբանական գրասենյակ, ինչպես նաև փաստաբանական գրասենյակների միջև:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })